ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով.**ավագանին որոշում է՝**

Հաստատել Նորամարգ համայնքի ավագանու թիվ 12 նիստի օրակարգը.

1.Համայնքի սեփականության ամենամյա ՝2018թ գույքագրման ամփոփ արդյունքները հաստատելու մասին

2.Նորամարգ համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

3.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին

4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

5.Նորամարգ համայնքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

6.Համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու և մեկնարկային գների սահմանման մասին.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
ԲԱՐԱՔԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43

## ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ՝ 2018ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով Նորամարգ համայնքի ղեկավարի 2018թվականի նոյեմբերի 29-ի թիվ 28 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված գույքագրման ամփոփ արդյունքները.համայնքի ավագանին *որոշում է*

1.Հաստատել Նորամարգի համայնքապետարանի, համայնքի մշակույթի տան,գրադարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպության/մսուր-մանկապարտեզ/ գույքագրման ամփոփ արդյունքները համաձայն հավելվածների.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 44-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնաոավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով,

Ավագանին որոշում է՝

Հաստատել Նորամարգ համայնքի 2018 թվականի Վարչական և բյուջեի եկամտային ծախսային մասերում համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

2018 թվականի վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 180.0 հազ. դրամ.՝ Համայնքի ենթակայության մանկապարտեզի ծնողական վճարների մուտքերի հաշվին.

2018թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 9-1-1 Նախադպրոցական կրթության հատվածի 4511 հոդվածը ավելացնել 180.0 դրամ. .

2018թ թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 4-2-4 ոռոգում հատվածի 4637 հոդվածը ավելացնել 600.0 հազ.դրամ Հայաստանի տարածքային Զարգացման Հիմնադրամի համաֆինանսավորելու նպատակով:

2018թ թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-1-1 Օրենսդիր և գործադիր մարմիններ հատվածի 4111 հոդվածը ավելացնել 830.0հազ. դրամ.

2018թ թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-1-1 Օրենսդիր և գործադիր մարմիններ հատվածի 4112 հոդվածը պակասացնել 400.3հազ. դրամ.

2018թ թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-1-1 Օրենսդիր և գործադիր մարմիններ հատվածի 4232 հոդվածը պակասացնել 349.7 դրամ.

2018թ թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 1-6-1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածի 4861 հոդվածը պակասացնել 680..0 դրամ.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 45

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ,համայնքի *ավագանին որոշում է՝*.

1.Համայնքի ղեկավարի աշխատվարձի չափը սահմանել 273000(երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ.2019 թվականի համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎՅԵԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար** ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ("ԾԻԱԾԱՆ" ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով. ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Նորամարգի համայնքապետարանի ,համայնքային ոչ-առևտրային կազմակերպության /մսուր-մանկապարտեզ/աշխատակազմերի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱՐԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ ,12-րդ և 14-րդ հոդվածներով և ՛Տեղական ինքնակառավարման մասին՛ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով.

ավագանին որոշում է՝

1.Սահմանել Նորամարգ համայնքի 2019 թվականի հետևյալ հետևյալ տեղական տուրքերը.կիրառել 0.5 գործակից

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ *յոթ հազար հինգ հարյուր* դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *տասնհինգ հազար* դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *քսան հինգ հազար* դրամ.
-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հիսուն հազար* դրամ.
-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հարյուր հազար* դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *երեք հազար* դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հինգ հազար* դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյությունունեցողշենքերիևշինություններիվերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացմանևբարեկարգմանաշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ *երեք հազար* դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ *հինգ հազար դրամ* դրամ.

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ *երկու հարյուր հազար* դրամ.

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *վաթսուն հազար* դրամ.

6)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ *հիսուն հազար* դրամ.

7)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *յոթ հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար հինգ հարյուր* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսան հազար* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հիսուն հազար* դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *երկու հազար հինգ հարյուր* դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար* դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *յոթ հազար* դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տասը հազար հինգ հարյուր* դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսան հազար* դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հիսուն հազար* դրամ.

8)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ *հարյուր յոթանասուն հինգ դրամ* մեկ քառակուսի մետրի համար.

9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ *հինգ հազար* դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *քսանհինգ հազար* դրամ.
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ *հարյուր հազար* դրամ.

դ. խաղատների համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

10)համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար վեց հարյուր դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային 666 սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

11)ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել ներառված իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ քսան հազար դրամ.

14)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *հինգ միլիոն* դրամ:

2,Նորամարգ համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝
համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *հինգ հազար* դրամ,

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներին ավարտելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝
համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար* դրամ,

3ճարտարապետա շինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո 2 ահագործման թույլտվության ձևակերպման համար՝
համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար* դրամ,

4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝
համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *հինգ հազար* դրամ,

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներին աճուրդների մասնակցության համար՝
համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *երեք հազար* դրամ:

6.տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝
աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցողն (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ----------------50դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար ------1000 դրամ կամ

բ/ըստ զանգվածի ՝մեկ տոննա աղբի համար --- 3000 դրամ

3).շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել --------------500 դրամ:

4) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել ՝ 1000 դրամ

7.Համայնքի ենթակայության մանկապարտեզի ,արտադպրոցական դաստիարակության հաստատություններում (երաժշտության ,նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայությունից օգտվողների համար ծնողական վճար սահմանել ամսական ՝4000 /չորս հազար/ ՀՀ դրամ.

8.Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների հետևյալ ցանկը և գնացուցակը՝

1.Կենդանիների հիվանդություններիբուժման ,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ

2. Ծննդօգնություն
1.թեթև միջամտություն - 1000 դրամ
2. ծանր միջամտություն - 5000 դրամ

3. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյուն առում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից /բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ - 100 դրամ / մանր եղջերավոր կենդանի./ - 200 դրամ /խոշոր եղջերավոր կենդանի ./

4. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200 դրամ

5. Ախտահանություն -1քառ. մետր 200 դրամ

6. միջատազերծում / դեզինսեկցիա/ -1քառ. մետր 100 դրամ

7. Կրծողներիոչնչացում / դեռատիզացիա / -1քառ. մետր 200 դրամ

8. Արհեստական սերմնավորում -5000 դրամ

9.Կենդանուհերձում - 1000 դրամ / մանր եղջերավոր կենդանի./ – 3000 դրամ / խոշոր եղջերավոր կենդանի./

10. Կենդանուբուժում /յուրաքանչյուր այցելություն / - 1000 դրամ

11. Կենդանիների նախասպանդային զննում -1000 դրամ/ մանր եղջերավոր կենդանի ./ - 2000 դրամ / խոշոր եղջերավոր կենդանի ./

12. Կենդանիներիհետսպանդայինզննում/մինչև 2018թ. հուլիս/ -1000դրամ / մանր եղջերավոր կենդանի./ - 2000/դրամ /խոշոր եղջերավոր կենդանի /

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՀՈՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru


# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 48

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով .համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին կազմակերպելու համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝

1)Հատուկ նշանակության հող` `13,0 հա ծածկագիր/03-068-0406-0001.0002.0004-ից/ .ից
2)գյուղ.նշանակության 5-րդ կարգի վարելահողեր `1,2 հա ,ծածկագիր /03-068-0404-0001/ ,2,6062 հա ,ծածկագիր /03-068-0303-0001/,0,8 հա.ծածկագիր /03-068-0346-0003/,5.09279 հա,ծածկագիր/03-068-0388-0001/.
3)գյուղ.նշանակության խոտհարք `3.46343 հա, ծածկագիր /03-068-0337 -0001/ վարձակալության տրամադրելու մրցույթ

2.Հողերը վարձակալության տալու համար մեկնարկային գին սահմանել `1 հա համար սկսած զուտ եկամուտի 15%:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՀՈՎԵՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱԼԻՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ